ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 18 » դեկտեմբեր 2025թ. No 7819 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության արդյունավետության, և որակի գնահատման N 01/6256-25 առ 16.12.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վերագրանցման ընթացակարգով գրանցել թվով 2 դեղ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցամատյանում լրամշակման կատարումը՝ ավելացնելով վերագրանցման մասին տվյալները:

4.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի վերագրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի դեկտեմբերի «18» - ի N7819 - Ա հրամանի

Վերագրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ	Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը
1	Ցիպրո-Տեք	ցիպրոֆլոքսացին	ակնա-/ականջակաթիլներ	3մգ/մլ; 5մլ շշիկ-կաթոցիկ, 10մլ շշիկ-կաթոցիկ	ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Ռաֆֆու փ. 111	Հայաստանի Հանրապետություն	ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Ռաֆֆու փ. 111	Հայաստանի Հանրապետություն	Դ	23691 12.12.2025	11.12.2025
2	Մուկալտին Տատֆարմ	տուղտ դեղատուփ հանուկ	դեղահատեր	50մգ; (10) ստրիպում	Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260	Ռուսաստան	Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260	Ռուսաստան	ԱԴ	23692 12.12.2025	07.09.2025